ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հոկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

132
(3163)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՆԱՐԱՎՈՐ ՎԵՆԴԵՏԱՅԻ ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆ ԿԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Փարաքար խոշորացված համայնքում օրեր շարունակ ուժեղացված հսկողություն է սահմանված: Հատկապես լարված է իրավիճակը Մերձավան բնակավայրում, որտեղ բնակվում են Ախտոյաններն ու Գրիգորյանները:

Տեղեկացանք, որ ոստիկանությունը հսկում է եւ Գրիգորյանների, եւ Ախտոյանների եւ Նարեկ Օհանյանի բնակարանները:

Մեր իրավապահ աղբյուրների փոխանցմամբ, ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ շուրջօրյա հերթապահություն են իրականացնում, իսկ ծառայողները, մինչեւ ատամները զինված, հսկում են գյուղի անցուդարձը: Պատճառը Վալոդյա Գրիգորյանի եւ ոստիկանության օպերլիազոր Կարեն Աբրահամյանի դաժան սպանությունն է: Իրավապահները չեն բացառում, որ դեպքից հետո կարող է տեղի ունենալ վենդետա, քանի որ քննության ընթացքից դժգոհ են եւ տուժող եւ սպանության համար մեղադրվող կողմերը:

Միեւնույն ժամանակ «Ժողովուրդ»-ը տեղեկացավ, որ ուժեղացված ծառայության մեջ ներգրավված ոստիկանների շրջանում դժգոհություններ են բորբոքվում. նրանք դժկամությամբ են արձանագրում, որ օրուգիշեր ստիպված են հերթապահել Փարաքարի փողոցներում:

«Հնարավոր չէ ֆիզիկական ներկայությամբ հավերժ ապահովել գյուղի անվտանգությունը եւ կանխել ծանր հանցանքները», - մեզ հետ զրույցում ընդգծել է ոստիկանական աղբյուրը:

Հիշեցնենք, որ փետրվարի 5-ին տեղի ունեցած ծեծկռտուքի եւ սպանության հաջորդող ամիսներին եւս նույն համայնքում ուժեղացված հսկողություն էր սահմանվել: Նույնիսկ հենակետեր էին տեղակայվել, սակայն այդպես երկարաժամկետ շարունակվել չէր կարող:

Արդյունքում, որոշ ժամանակ անց հսկողությունը թուլացավ, հենակետերը հանվեցին, եւ հնչեցին դավադիր կրակոցներ, որոնց արդյունքում սպանվեցին երկու երիտասարդ տղամարդիկ:

Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Նյու Յորքից վերադառնալուց հետո, որոշել է առողջության ապահովագրության թեման վերցնել իր վերահսկողության տակ: Տպավորություն է, որ այս ոլորտը համակարգող փոխնախարար Լենա Նանուշյանը ձախողել է ապահովագրության ներդրումը, ինչի հետեւանքով էլ նախարարն անձամբ է հայտնվել գործընթացի առաջատարի դերում եւ հատուկ ասուլիս է հրավիրել դրա վերաբերյալ: Լենա Նանուշյանը, որը առավել հայտնի է սոցիալական հարթակներում տեսանյութեր նկարելով եւ տարածելով, փաստացի տապալել է Նիկոլ Փաշինյանի կառավարության ակնկյունաքարային խոստումը: Համընդհանուր առողջապահական ապահովագրությունը դեռեւս 2023 թվականին պետք է ներդրված լիներ Հայաստանում, սակայն գործընթացը շարունակաբար հետաձգվել է եւ մինչ օրս կյանքի չի կոչվել: Իսկ այդ ընթացքում Լենա Նանուշյանի որդին ազատվեց պարտադիր զինվորական ծառայությունից, թեպետ Կառավարությունը լուրջ դեմքով պահանջում է, որ մյուսները չխուսափեն բանակից, քաղաքացիություն չփոխեն, բոլորը ծառայեն: Ավելին՝ պարտադիր զորավարժանքից խուսափողների պատիժն են խստացնում: Իսկ փոխնախարար Նանուշյանը եւ անձնական-ընտանեկան հարցերը լուծեց, եւ ապահովագրությունը տապալեց եւ շարունակում է մնալ որպես պետական բարձր պաշտոնյա: Հիմա նախարար Ավանեսյանը փորձելու է իր ձեռքով նոր ընթացք հաղորդել գործընթացին:



Վերջին օրերին Փարաքարում, այնուհետեւ Սյունիքում եւ Արմավիրում հնչած կրակոցներն ու դրանց հետեւանքով առաջացած քրեածին լարվածությունը դարձյալ հստակեցրել են մեկ բան. իրավապահ համակարգի տարբեր օղակներ պատասխանատվություն ստանձնելու փոխարեն փորձում են մեղքը բարդել միմյանց վրա: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ յուրաքանչյուր կառույց իր արդարացումն ունի: Ոստիկանությունում վստահեցնում են, թե իրենք իրենց գործը հստակ կատարում են. «Մենք անմիջապես հայտնաբերում ու ձերբակալում ենք հանցանք կատարողին, տալիս ենք քննիչներին: Եթե կալանավորելու փոխարեն ազատ են արձակում՝ դա այլ տիրույթ է, մենք ոչինչ չենք կարող անել»: Իսկ քննիչները պնդում են հակառակը՝ հայտնելով. «Մենք դատարան ենք ներկայացնում կալանքի միջնորդություններ, սակայն դատարանները որոշում են այլընտրանքային խափանման միջոց կիրառել: Արդյունքում՝ հանցագործները կրկին ազատության մեջ են հայտնվում»: Երկու կառույցներն էլ պատասխանատվության խարանը դնում են դատախազության վրա՝ ընդգծելով, որ հենց դատախազությունն է պարտավոր դատարաններում ապահովել մեղադրանքի կուռ պաշտպանություն: Դատախազության ներկայացուցիչները, սակայն, իրենց հերթին վստահեցնում են, որ բոլոր դեպքերում բողոքարկում են դատարանների որոշումները բոլոր վերադաս ատյաններում եւ գործում օրենքի սահմաններում: Այսպիսով՝ ստեղծվել է փակ շրջան. ոստիկանները մատնանշում են քննիչներին ու դատարաններին, քննիչները՝ դատարաններին, դատախազությունը՝ վերադաս ատյաններին ու դատարաններին: Իսկ մինչ իրավապահ մարմինները միմյանց ուղղված մեղադրանքների ու արդարացումների մեջ են, կրակոցներն ու սպանությունները շարունակում են ցնցել հանրությանը: «Ժողովուրդ» օրաթերթը առաջիկա օրերին կանդրադառնա նաեւ դատական իշխանության տեսակետին՝ հասկանալու համար, թե ինչու են հնչող կրակոցների հեղինակները կրկին հայտնվում ազատության մեջ:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը թեպետ պնդում է, որ իր ունեցվածքի զգալի մասը ունեցել է մինչեւ հեղափոխությունը, նրա հայտարարագիրը, սակայն, հակառակն է փաստում: Ապացույցներից մեկը Տիգրան Ավինյանի 66-ամյա հոր՝ Արմեն Ավինյանի կողմից Սեւանա լճի ափին կառուցվող առանձնատան հանգամանքն է: «Հետքը» գրել էր, որ Տիգրան Ավինյանի հայրը Սեւանում առանձնատուն է կառուցում: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթն է արձանագրել, Ավինյանների առանձնատան համար այս օրերին հատուկ ճանապարհ է կառուցվում հայկական տուֆից: Հայաստանում ամենալավ տուֆը, որը կարող է օգտագործվել ճանապարհաշինարարության համար, բավականին թանկ արժե՝ 500-ից 600 դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը կապվեց Ճամբարակ խոշորացված համայնքի Շողակաթ գյուղի վարչական ղեկավար Նաիրի Պողոսյանի հետ հասկանալու համար՝ արդյոք Երեւանի քաղաքապետի հոր շքեղ առանձնատուն տանող ավտոճանապարհը նորոգվում է համայնքայի՞ն բյուջեով, թե՞ անձնական միջոցներով: Վարչական շրջանի ղեկավարը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պնդեց, թե համայնքը չի աջակցում տան ճանապարհի կառուցմանը: Նա նկարագրեց, որ այդ ճանապարհը պետք է անցնի տարբեր սարալանջերով, համարեց, որ հեռանկարային է այդտեղ ինչ-որ բան կառուցելը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈՒՇԿԻՆԻ 4 ՀԱՍՑԵԻ ՀՐԴԵՀԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՀԵՐՔՈՒՄ Է ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկում օրերս բռնկված հրդեհը լայն քննարկումների տեղիք է տվել: Սոցցանցերում տարածվում են տարբեր վարկածներ այն մասին, թե հրդեհը դիտմամբ է կազմակերպվել: Մեղադրանքների թիրախում հաճախ հիշատակվում են քաղաքային իշխանությունները:

Հրդեհված շենքում՝ Պուշկինի 4 հասցեում, գործում է «ArtKvartal» ժամանակակից արվեստի պատկերասրահը, որը հիմնադրել են արվեստագետներ Հարություն Հովսեփյանն ու Սերո Սողոմոնյանը: Տարածքը նրանց տրամադրել էր սեփականատերը: Հենց այստեղ էլ ծավալվել են խոսակցություններ, թե նպատակ են ունեցել շենքը քանդելու ու կառուցապատում իրականացնելու, սակայն սեփականատերը հրաժարվել է վաճառքից, ուստի այն դիտմամբ հրկիզվել է:

Արվեստագետ Հարություն Հովսեփյանը, սակայն, «Ժողովուրդ»-ի հետ զրույցում նման ենթադրությունները անվանեց անհիմն:

-Պարոն Հովսեփյան, ի՞նչ վարկածներ ունեք Դուք հրդեհի՝ կազմակերպված լինելու վերաբերյալ:

-«Ֆեյսբուքում» կարող են նման անլուրջ խոսակցություններ լինել, թե իբր դիտմամբ է արվել: Շատ դեպքերում պատահարի ժամանակ հասարակությունն սկսում է ենթադրել, թե դա միտումնավոր է: Բայց ես նման վարկած չունեմ:

-Դուք ինչպե՞ս տեղեկացաք հրդեհի մասին:

-Ես հասցրի միայն փողոցը միացնել, ինչ-որ բան փորձել անել, հետո արդեն հրշեջները եկան: Մենք ինքնակազմակերպվեցինք:

-Այսինքն՝ լիովին բացառո՞ւմ եք դիտավորյալ հրդեհի տարբերակը:

-Այո: Այս տարածքի տակով մետրո է անցնում, շուրջբոլորը բնակելի տներ են: Չէր կարող այստեղ նման բան կազմակերպվել:

Հովսեփյանի խոսքով՝ ներսում պահվող նկարները հաջողվել է դուրս բերել:

ՆԳՆ պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ հրդեհի հետեւանքով այրվել են շինությունը՝ տանիքով (մոտ 375 քմ), ինչպես նաեւ գույք ու սարքավորումներ՝ մասամբ:

Հարկ է նշել, որ շենքը 2021 թվականին հանվել է Կառավարության 2013 թվականի որոշմամբ հաստատված՝ «գերակա հանրային շահ» ճանաչված տարածքների ցանկից: Այդ ժամանակ փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը նշել էր, որ, հաշվի առնելով պատմամշակութային արժեքների պահպանման խնդիրը, որոշվել է տվյալ հասցեները հանել այդ ցուցակից: Քաղաքապետարանին առաջարկվել էր մշակել նոր քաղաքաշինական սխեմա:

«Ես ուզում եմ ուղղակի հատուկ շեշտել, որ պատմամշակութային արժեք ներկայացնող նման շենքերի ձեւափոխումները, քանդումը, տեղափոխումը, ընդհանուր առմամբ, ընդունելի չէ կառավարության համար», - նշել էր Ավինյանը:

Սակայն մինչ օրս շենքի պատշաճ պահպանման ուղղությամբ ոչինչ չի արվել: Հիմա արդեն հրդեհից հետո այն կանգնած է փլուզման վտանգի առաջ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՎԻՆՅԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԿՈՆՑԵՊՏԻՆ

Ամեն նոր որոշման հետ հասարակությունն ավելի է համոզվում, որ ՀՀ գլխավոր կառույցները, օրինակ՝ քաղաքապետարանը, նախարարությունները, միմյանցից տեղյակ չեն: Դա բազմիցս ապացուցվում է հակասական օրենքների նախագծեր բերելով, քննարկելով եւ ընդունելով:

Բանն այն է, որ երեկ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ հնչեցին առաջարկներ, որոնք հակասում են առկա փաստերին:

Երեւանի քաղաքապետարանն առաջարկում է սահմանափակել բջջային հեռախոսների օգտագործումը դպրոցներում: Այդ մասին Երեւանի քաղաքապետարանի՝ սեպտեմբերի 29-ի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասաց հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը՝ ներկայացնելով նախաձեռնության մանրամասները:

Համաձայն նախագծի՝ առաջարկվում է 1-6-րդ դասարանի սովորողներին բացարձակապես թույլ չտալ դասապրոցեսի, միջոցառումների, դասամիջոցների ժամանակ իրենց հետ ունենալ միացված հեռախոսներ: Առանձին դեպքերում, երբ երեխան պետք է ստիպված բերի հեռախոսը դպրոց, այն դասերի սկզբում կհանձնվի դասղեկին, նա հեռախոսը կպահի համապատասխան պահման վայրում, եւ միայն դասերի ավարտից հետո թույլ կտրվի վերցնել այն:

7-12-րդ դասարանցիների համար առաջարկվում է սահմանափակումներով օգտագործում, ընդ որում՝ խոսքը միայն հեռախոսների մասին չէ. պլանշետների, խելացի ժամացույցների, բոլոր սարքավորումներին է նաեւ վերաբերում խիստ սահմանափակումը՝ բացառապես կրթական նպատակներով եւ ուսուցչի հրահանգով ու վերահսկողությամբ օգտագործման դեպքերի: Դա կարող է շաբաթական 1-2 անգամ լինել:

Արձագանքելով նախաձեռնությանը՝ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն առաջարկեց հարցը ուղարկել կարծիքի հավաքագրման, որից հետո ներկայացնել վերջնական լուծումներ:

«Դպրոցականները սկզբում որոշակիորեն մի փոքր կընդվզեն մեր որոշմանը, բայց կրթության որակի, նրանց առօրյայի եւ նույնիսկ երջանկության վրա վստահորեն այս արգելքները դրական են ազդելու», - արձագանքել էր Ավինյանը:

Տիգրան Ավինյանը գուցե տեղյակ չէ, սակայն հարկ է նրան հիշեցնել, որ ըստ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի՝ անգամ հայոց գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցն է դարձել QR կոդ դասագրքում: Նախարարությունը նաեւ այնպես է արել, որ սմարթֆոնը դառնա դասագրքի, աշակերտի եւ դասապրոցեսի անբաժան մի մասնիկը, ինչը հակասում է քաղաքապետարանի արած առաջարկին:

Ստացվում է, որ սկզբում Մեսրոպ Մաշտոցի նկարի բացակայությունը արդարացված էր, եւ սրտի մխիթարությունն այն էր, որ Ամենայն Հայոց ուսուցչին աշակերտները կարող են տեսնել QR կոդի շնորհիվ, հիմա էլ երեխաներին «զրկում են» նրան տեսնելու գոնե այդ հնարավորությունից:

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌ ՄԵԿ ԱՄԻՍ «ԿՍՊԱՍԻ»

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ վարչության նորընտիր անդամներով նիստը նախատեսվում է իրականացնել նոյեմբերի սկզբին: Բանն այն է, որ այժմյան ՔՊ վարչության նիստի լիազորությունները ավարտվում են հոկտեմբերի 29-ին, ու մոտ մեկ ամիս դեռեւս ՔՊ-ականները «հին» դեմքերով են վարչության նիստն իրականացնելու:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 20-ին կայացան ՔՊ վարչության անդամների ընտրությունները, որտեղ նոր կազմում ընգրկվեցին 20 ՔՊ-ականներ:

Էլեկտրոնային քվեարկությունը անցավ անհասկանալի արդյունքներով, ՔՊ-ականներին Փաշինյանը հրահանգեց նաեւ ձեռքով հաշվել 917 քվեաթերթիկները, ինչը տեւեց մոտ 3 օր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՓՈԽԵԼ ՔՕ 136-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

ՀՀ ԱԺ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունն առաջարկում է փոփոխել Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը, որը վերաբերում է ցեղասպանություններին եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելուն, արդարացնելուն, դրանք քարոզելուն կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելուն: Քրեական օրենսգրքում փոփոխություն նախատեսող օրինագիծը ներկայացնելով՝ խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը նշել է, որ իրենց համար հիմք է հանդիսացել փաստացի վիճակագրական տեղեկատվությունը, որ այս հոդվածով երբեւէ քրեական վարույթ չի նախաձեռնվել, թեեւ բազմաթիվ են եղել դեպքերը, փաստերը, երբ Հայոց ցեղասպանության հերքման, արդարացման, մեղմման ուղղությամբ հրապարակային հայտարարություններ են հնչել: Օրինագծի ներկայացման հաջորդ պատճառն այն է, որ թե՛ Հայոց ցեղասպանությունը, թե՛ Հայաստանի Հանրապետության կողմից պաշտոնապես ճանաչված ցեղասպանությունները եւ թե՛ միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություններն արդարացնողների կամ դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելու հրապարակային հայտարարություններ կատարողների նկատմամբ իրականացվի քրեական հետապնդում:

«Նախագծի ընդունման անհրաժեշտությունն այս պահին բացակայում է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածն արդեն նախատեսել է նախագծով ներկայացված արարքի քրեականացումը», - ընդգծել է ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ալխաս Ղազարյանը՝ ներկայացնելով հանձնաժողովի բացասական եզրակացությունը: Վերոնշյալով էլ պայմանավորված՝ պատգամավորը հորդորել է գործընկերներին դեմ քվեարկել:

Արդարադատության փոխնախարար Տիգրան Դադունցը մանրամասն ներկայացրել է Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, նշել, որ նախագծի եւ գործող կարգավորման հիմնական տարբերությունն այն է, որ առաջարկվում է քրեականացնել առանց կոնկրետ նպատակի բանավոր խոսքը՝ միտված ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները հերքելուն, նսեմացնելուն, մեղմելուն եւ այլն: Առաջարկվող էական փոփոխությունը Հայոց ցեղասպանությունը նշված հոդվածում այլ ճանաչված ցեղասպանություններից առանձնացնելն է: Անդրադառնալով այս հանցագործությունների սահմանմանը՝ Տիգրան Դադունցը նշել է, որ դրանց առանձնահատկությունն այն է, որ անմիջականորեն հարաբերակցվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, այն է՝ արտահայտվելու ազատության իրավունքի հետ: «Այս համատեքստում, մեր կարծիքով, քրեական պատասխանատվության սպառնալիքով պետք է արգելված լինեն միայն այն արարքները, որոնք մեծ եւ իրական հանրային վտանգավորություն են ներկայացնում»,- նշել է փոխնախարարը:

Հոդվածն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

ԻՐԱՎԻՃԱԿ

YouTube-Ը 24.5 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ ԿՎՃԱՐԻ ԹՐԱՄՓԻՆ

Google-ին պատկանող YouTube-ը 24.5 միլիոն դոլար կվճարի Դոնալդ Թրամփին: Դոնալդ Թրամփը հարուցել էր դատական գործ այն բանից հետո, երբ հարթակը կասեցրել էր նրա հաշիվը 2021 թվականի ընտրություններից հետո:

Ավելի քան չորս տարի տեւած գործի համաձայն՝ 22 միլիոն դոլարը ուղղվելու է Թրամփի կողմից National Mall Trust հիմնադրամին՝ Սպիտակ տանը նոր հանդիսությունների սրահ կառուցելու նպատակով: Մնացած 2.5 միլիոն դոլարը կվճարվի գործի մյուս կողմերին, այդ թվում՝ գրող Նաոմի Վուլֆին եւ American Conservative Union կազմակերպությանը:

Meta-ն համաձայնեց վճարել 25 միլիոն դոլար՝ կարգավորելու Թրամփի հայցը, որը վերաբերում էր նրա հաշվի 2021-ի արգելափակմանը Facebook-ում, իսկ X-ը (նախկինում Twitter)՝ 10 միլիոն դոլար: Երբ հայցերը ներկայացվեցին Meta-ի, Twitter-ի եւ YouTube-ի դեմ, իրավական փորձագետները կանխատեսում էին, որ Թրամփը քիչ հնարավորություն ուներ հաջողության հասնելու:

ԱՄՆ-Ի ԲԱՆԱԳՆԱՑԸ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԿԼԻՆԻ

ԱՄՆ-ի նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը պատրաստվում է պաշտոնաթող լինել մինչեւ տարեվերջ: Այդ մասին հայտնել է Times of Israel-ը՝ հղում անելով իրազեկ աղբյուրի:

Նշվում է, որ դա կարող է տեղի ունենալ այն ֆոնին, որ, հավանաբար, Գազայի պատերազմում բեկումը մոտ է, հատկապես այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն ընդունել է Գազայում պատերազմը դադարեցնելու վերաբերյալ ամերիկյան պլանը, եւ միջնորդները սպասում են ՀԱՄԱՍ-ի պատասխանին:

ԷՐԴՈՂԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ ուկրաինական ճգնաժամը սեպտեմբերի 25-ին Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ իր բանակցությունների առաջնահերթ թեմաներից մեկն է եղել:

«Դոնալդ Թրամփի եւ նրա պատվիրակության հետ համապարփակ, արդյունավետ եւ տեղեկատվական հանդիպում անցկացրինք: Բարեկամական մթնոլորտում քննարկեցինք հարցերի լայն շրջանակ: Մեր ուշադրության կենտրոնում էին Գազայում տեղի ունեցող իրադարձությունները, Իսրայելի աճող ագրեսիան, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմը եւ մեր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները: Մենք մանրամասնորեն քննարկեցինք Սիրիայում կայունության պահպանման եւ Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատման հարցերը», - հաղորդում է «ՏԱՍՍ»-ը:

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ Է ԴԱՐՁԵԼ ՔՊ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Դավիթ Խուդաթյանը ՔՊ վարչության ընտրություններում 562 ձայն է վաստակել:

Վարչության կազմում տեղավորվելուց հետո՝ Խուդաթյանը այս անգամ էլ Արգիշտի Մեխակյանի հետ է փորձում քարոզչություն իրականացնել:

ArmLur.am-ը գրել էր, որ Վաղարշապատ համայնքի ժամանակավոր պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանն ու ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը համայնքի գործարարներին «հավաքել» են Դվին հյուրանոցում:

Հայտնել էինք, որ Մեխակյանը պետք է գործարարներին ներկայացնի, թե ինչ պլաններ ունի առաջիկայում՝ քաղաքապետ ընտրվելուց հետո:

Այսպիսով՝ ներկայացնենք, թե ինչ ունեցվածքով է ՏԿԵ նախարարը դարձել ՔՊ վարչության անդամ եւ լծվել նախընտրական քարոզչությանը.

Դավիթ Խուդաթյանը 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ ունի մեկ բնակարան բազմաբնակարան շենքում, որը ձեռք է բերել 2019 թվականին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

Փարաքարում ընտրությունները տապալած Խուդաթյանը նախորդ տարի, որպես տվյալ տարվա ընթացքում ձեռք բերած տրանսպորտի միջոց, հայտարարագրել է 2020 թվականի արտադրության, 8,5 մլն դրամ արժողությամբ TOYOTA մակնիշի մեքենա:

Նախարարի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 2 մլն 790 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 4,1 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 700 հազար դրամ, որից 11 մլն 995 հազար դրամը Արմավիրի մարզպետարանի աշխատակազմից է ստացել, քանի որ Արմավիրում տարբեր պաշտոններ զբաղեցնելուց հետո կրկին նշանակվել էր մարզպետ:

Եկամուտների մի մասը՝ 3 մլն 597 հազար դրամը, Խուդաթյանը ՀՀ ՏԿԵ նախարարությունից է ստացել, քանի որ նախարար է նշանակվել 2024թ. նոյեմբերի 21-ին:

Եկամտի մյուս մասը՝ եւս 1 մլն 107 հազարը, ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի աշխատակազմից է տրվել:

Խուդաթյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 22 մլն 87 հազար դրամ, որից 18 մլն 610 հազարը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Խուդաթյանը հեղափոխությունից հետո՝ 2019 թվականին, միայն մեկ բնակարան է գնել, որն էլ այս 7 տարիներին նրա միակ ձեռքբերումն է եղել:

Հիշեցնենք, որ հեղափոխությունից անմիջապես հետո Արմավիրի մարզի ղեկն իր ձեռքը վերցրած Խուդաթյանը պարտավորվել էր Փարաքարում ապահովել ՔՊ-ի լիակատար հաղթանակը, սակայն իշխանությունը խայտառակ կերպով տապալեց ընտրությունը, եւ ընդդիմությունը հաղթանակ տարավ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՕՐԱԿԱՐԳ ՉԻ ԸՆԴԳՐԿՎԵԼ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ գերլարված իրավիճակ է ԱԺ-ում: Բանն այն է, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրաժարվում է խորհրդարանի հերթական նստաշրջանում ընդգրկել, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի կազմած եւ ուշացմամբ ուղարկած «44-օրյա պատերազմի ....» զեկույցը:

Ըստ մեր աղբյուրների՝ Սիմոնյանը ԱԺ ՔՊ խմբակցության մոտ հայտարարել է, որ զեկույցի ներկայացման հետ կապված բոլոր ժամկետները սպառված են ու, ըստ ԱԺ կանոնակարգի, ինքն իրավունք չունի զեկույցը ԱԺ նստաշրջանում քննարկելու: Երեքշաբթի կայացած ԱԺ օրակարգում հարցը ընդգրկված չէր:

Իշխանական մեր աղբյուրները նշում են, որ Քոչարյանը «հանգիստ իր տեղում» չի նստելու, քանի որ նպատակ ունի «44-օրյա ....»-ի զեկույցով շոուներ «բեմադրել»: Բայց, արի ու տես, որ իր ցանկությունները իրականություն չեն դառնում:

Նշենք, որ դեռեւս սեպտեմբերի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազգային ժողովում արդեն երեքուկես տարի շարունակված գործընթացը, որը կոչված էր ուսումնասիրելու 44-օրյա պատերազմի հանգամանքները, այսօր փաստացի փակուղում է: Անդրանիկ Քոչարյանի ղեկավարած քննիչ հանձնաժողովը ստեղծվել էր 2022 թվականի փետրվարին, հստակ ժամկետով՝ սկզբում 6 ամիս, այնուհետեւ եւս 6 ամիս երկարաձգման հնարավորությամբ: ԱԺ կանոնակարգ-օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ 2023-ին արդեն Անդրանիկ Քոչարյանը պարտավոր էր ավարտել իր աշխատանքները եւ ներկայացնել եզրափակիչ զեկույցը: Սակայն Քոչարյանն անտեսել է օրենքի սահմանած ժամկետները: Փաստացի, 2023 թվականից հանձնաժողովն այլեւս իրավական հիմքերով գոյություն չունի, բայց Քոչարյանը շարունակում է հանդես գալ որպես դրա ղեկավար եւ անգամ ճնշումներ է գործադրում ԱԺ աշխատակազմի վրա:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻԼԼԻ ՄԵՋԼԻՍԻ ԽՈՄՆԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի մասնակցությունը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 80-րդ նստաշրջանին մեծ նշանակություն ունի: Այս մասին երեկ Միլլի Մեջլիսի նիստում հայտարարել է Միլլի Մեջլիսի խոսնակ Սաբիհա Գաֆարովան:

Սաֆարովան նշել է, որ Ադրբեջանն արդեն իսկ ունի հաղթանակած երկրի կարգավիճակ. «Պետության ղեկավարը նշեց, որ տասնամյակների ընթացքում Ադրբեջանը «օկուպացիայի ենթարկված» երկրի կարգավիճակից անցել է հաղթանակած եւ առաջատար երկրի կարգավիճակի:

Խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը եւ ձեռք բերված այլ պայմանավորվածությունները ցույց տվեցին մեր պետության կարողությունը՝ պաշտպանելու իր ազգային շահերը ինչպես ուժային մեթոդներով, այնպես էլ իրավական եւ քաղաքական գործիքների միջոցով:

Խաղաղության համաձայնագիրը նաեւ ցույց տվեց, որ կայունությունը հնարավոր է միայն միջազգային իրավունքի նորմերի հիման վրա: Նախագահի ելույթում մեծ ուշադրություն է դարձվել «ազատագրված տարածքների ականազերծմանը, դրանց վերականգնմանը, նախկին հարկադիր վերաբնակների վերադարձին հայրենի հողեր» եւ ենթակառուցվածքների զարգացմանը»:

ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՆՁՐԵՎ

Երեւանում հոկտեմբերի 1-ին եւ 2-ին հնարավոր է անձրեւ: Այս մասին հայտնում են «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»-ից:

Հոկտեմբերի 3-5-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

Մարզերում հոկտեմբերի 1-ին եւ 2-ին առանձին շրջաններում սպասվում է անձրեւ, հնարավոր է նաեւ մառախուղ: Հոկտեմբերի 3-5-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ արեւմտյան՝ 2-5մ/վ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-18 մ/վ արագությամբ:

Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 1-եւ եւ 2-ին աստիճանաբար կնվազի 5-8 աստիճանով, հոկտեմբերի 3-5-ին նույնքան կբարձրանա:

ՀԱՐՑԵՐՈԸ ՇԱՏԱՑԱՆ

ՔԿ ՂԵԿԱՎԱՐԸ ՉԿԱՐՈՂԱՑԱՎ ՓՐԿԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Նիկոլ Փաշինյանի իշխանությունն ակնհայտորեն փորձում է այնպես անել, որ Փարաքար համայնքի ընտրված ղեկավար Վալոդյա Գրիգորյանի եւ նրա ընկեր, ոստիկանության օպերլիազոր Կարեն Աբրահամյանի սպանությունները համարվեն վենդետա՝ իսպառ փակելով մյուս հնարավոր վարկածների թեման՝ մամրելով ՔՊ-ական Ախտոյան եղբայրներին:

Երեկ Հ1-ով կազմակերված հարցազրույցի ժամանակ քաղաքականապես ուղղորդված հարցազրուցավարը խիստ պասիվ էր, մի քանի հարց հնչեցրեց, որին պատասխանելիս Քննչական կոմիտեի ղեկավար Արթուր Պողոսյանն ընդգծեց, թե սեպտեմբերի 23-ին կատարված դաժան սպանությունը վենդետա է: Հետո՝ փորձեց իրեն ուղղել, թե քննությունը կշարունակվի այնքան ժամանակ, մինչեւ բոլոր հարցերի պատասխանները հանրությունը ստանա:

Այս առիթով անհրաժեշտ ենք համարում հրապարակավ հնչեցնել հարցեր Քննչական կոմիտեի ղեկավարին, որը նախընտրեց ոչ թե մամուլի ասուլիս անել եւ պատասխանել գոյություն ունեցող իրական հարցերին, այլ մենախոսել Հ1-ով:

Ի՞նչ ասաց Արթուր Պողոսյանը

«Ինչպես գիտեք, 2025 թվականի փետրվարի 5-ին Մերձավան համայնքում տեղի ունեցած սպանության առիթով, երբ վարույթ նախաձեռնեցինք, վարույթը հարուցվեց ոչ միայն սպանության հատկանիշներով, այլեւ նախաձեռնվեց ապօրինի զենք, հրազեն պահելու հատկանիշներով, մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու հատկանիշներով, ինչպես նաեւ մի խումբ անձանց կողմից տարբեր անձանց մարմնական վնասվածքներ հասցնելու հատկանիշներով: Քանի որ քրեական վարույթը հանրային հնչեղություն էր ստացել, տարբեր լրատվականներ լուսաբանում էին, այդ առիթով իմ կողմից քրեական վարույթի նախաքննությունը հանձնարարվեց հատկապես կարեւորագույն գործերով քննության վարչությանը, եւ իմ որոշմամբ ստեղծվեց համատեղ քննչական խումբ, ու նախաքննությունն իրականացվեց Կենտրոնական ապարատում:

Նշեմ, որ քրեական վարույթի շրջանակներում կատարվել է լրիվ, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննություն, եթե նայենք ժամանակագրությունը, դեպքը տեղի է ունեցել փետրվարի 5-ին, ապրիլի վերջի դրությամբ 14 մեղադրյալների վերաբերյալ մենք հաստատված մեղադրական եզրակացությամբ գործը ուղարկել ենք դատարան:

Պարզվեց նաեւ սպանություն կատարող անձի ինքնությունը, ով սկզբնական շրջանում գտնվում էր փախուստի մեջ, այնուհետեւ հայտնաբերվեց, կալանավորվեց, նրա նկատմամբ էլ գործը հունիսին ուղարկվեց դատարան:

Վեճի առարկան նախաքննությամբ հաստատվել է. այն առաջացել է ավտոմեքենան արագ վարելու հարցի շուրջ, որի արդյունքում կողմերից մեկը ծեծի է ենթարկել մյուս կողմին, եւ դրանից հետո տեղի է ունենցել իմ կողմից մատնանշած դեպքը՝ երբ հավաքվել են եւ տեղի է ունեցել զենքի գործադրմամբ խուլիգանություն, ինչի հետեւանքով սպանվել է Գրիգոր Օհանյանը: Մեկ անձ էլ հրազենային վիրավորում է ստացել: Վեճի շարժառիթը դարձյալ իմ մատնանշած հանգամանքն է:

Քննչական կոմիտեի կողմից ներկայացված կալանքի 13 միջնորդություններից միայն 6-ն է բավարարվել սկզբնական շրջանում, իսկ վերջում, միայն 3 անձի կալանքով է գործը դատարան ուղարկվել, հետագայում նրանց խափանման միջոցները փոխվելեն:

Մենք ունեինք տվյալներ, որ կողմերի միջեւ կան լարված փոխհարաբերություններ, որը հնարավոր է ծանր հետեւանքների հանգեցնի: Արվել են համալիր օպերատիվ հետախուզական միջոցառումներ ....»:

Հարցեր՝ Քննչական կոմիտեի ղեկավարին

«Հարց 1. Պարոն Պողոսյան, ո՞ւմ միջեւ կար լարված հարաբերություն. հնչեցրե՛ք հստակ անուններ՝ ի՞նչ նկատի ունեք «կողմեր» ասելով:

Հարց 2. Ինչո՞ւ ոչ մի խոսք չասացիք ՔՊ-ական համայնքապետ Միհեր Ախտոյանի մասին, ինչո՞ւ էր նրա տան լուսամուտի տակ տեղի ունեցել փետրվարի 5-ի ծեծկռտուքը, եթե չկար իշխանական կուսակցության ներկայացուցչի մասնակցությունը որեւէ կերպով:

Հարց 3. Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտանիքին պատկանող կայքը, հղում անելով իր աղբյուրներին, գրել էր, որ այդ օրը հարձակում է եղել համայնքի ՔՊ-ական ղեկավար Միհեր Ախտոյանի տան վրա: Փետրվարի 5-ին սպանվածի եղբայրը նույն ՁԼՄ-ի հետ զրույցում ասում է, որ հարձակում էր եղել Միհեր Ախտոյանի տան վրա, եւ իրենք չեն թողել, որ Միհերը դուրս գա:

Իրենք եղբայրներով դուրս են եկել ու տեսել զինված մարդկանց՝ այդ թվում նաեւ Վալոդյա Գրիգորյանի կրտսեր եղբորը՝ Պայքար Գրիգորյանին: Իսկ Դուք ասում եք՝ ավտոմեքենան արագ վարելու թեմա էր եղել. քննության ընթացքում տուժողի պնդումները արդյո՞ք հերքվել են:

Հարց 4. Ինչո՞ւ է սեպտեմբերի 23-ի սպանության գործով հարցաքննվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, Փարաքարի ավագանու անդամ Դավիթ Ախտոյանը, եթե նա կամ նրա՝ Հայաստանում չգտնվող եղբայրը՝ Միհերը, Վալոդյա Գրիգորյանի սպանության հետ առնչություն չունի:

Սպանության ենթադրյալ պատվիրատուի վարկած քննվո՞ւմ է, ո՞վ կամ ովքե՞ր կարող են դիտարկվել որպես այդպիսին: Որեւէ տեղում պատվիրատուի վերաբերյալ անդրադարձ չկա:

Հարց 5. Սպանությունների դեպքից հետո Ձեր հրամանով Արմավիրի մարզային քննչական վարչության պետն ազատվել է պաշտոնից: Ինչո՞ւ է նա հեռացվել, եթե Դուք հայտարարում եք, որ փետրվարի սպանությունը բացահայտելու համար նախաքննությունը հանձնարարել եք Քննչական կոմիտեի ՀԿԳ վարչությանը, ստեղծել եք նախաքննություն կատարող քննիչների խումբ, որոնց աշխատանքից գոհ եք, դատարաններն են մեղավոր:

Հարց 6. Արդյո՞ք Արմավիրի պետին աշխատանքից ազատելով՝ Դուք կատարել եք պոպուլիստական քայլ՝ ընդառաջ գնալով ՀՀ վարչապետի ֆեյսբուքյան գրառմանը, որ կլինեն հետեւություններ, ենթադրաբար նաեւ պաշտոնանկություններ. ուստի զոհաբերեցիք Արմավիրի վարչության պետին, որ ասելու բան ունենաք:

Հարց 7. Եթե փետրվարի 5-ի սպանության գործի քննչական խմբի ղեկավարից եւ կամ ՀԿԳ վարչության պետի աշխատանքից դուք այդքան գոհ եք, ի՞նչ հիմքով եք պնդում, որ վենդետա է եղել: Եթե բոլորը օրենքով իրենց հասանելիք պատիժը, ըստ Ձեզ, ստացել են, ինչո՞ւ պետք է մյուս կողմը անարդարության զգացողություն ունենար եւ վենդետա իրականացներ՝ սպանելով փետրվարի 5-ի սպանության հետ որեւէ առնչություն չունեցած Վալոդյա Գրիգորյանին:

Հարց 8. Եթե քննությունը տեղի է ունեցել օբյեկտիվ, բազմակողմանի, ինչու էր սպանվածի եղբայրը սպանությունից հետո Նիկոլ Փաշինյանի ընտանեկան ՁԼՄ-ին փաստացի բողոքում քննության ընթացքից, Ձեր ուշադրությունը հրավիրում տարբեր հանգամանքների վրա:

Հարց 9. Ողջ զրույցի ընթացում ո՛չ լրագրողը, ո՛չ Քննչական կոմիտեի ղեկավարը չխոսեցին այն մասին. իսկ գուցե սպանություն կատարողը ունեցել է մ՚յլ շարժառիթ եւ փորձել է կյանքից զրկել ոստիկանության օպերլիազորին, որը սկզբունքային, ազնիվ եւ համարձակ ոստիկան է եղել: Ավելին՝ կայքերում հրապարակումներ կային, որ նա է նախկինում խուզարկել Օհանյանների տունը, ինչը դուր չի եկել Նարեկ Օհանյանին: Այս վարկածը արդյո՞ք որեւէ կերպ քննարկվում է Քննչական կոմիտեում, թե՞ հանցանք կատարողի տված ցուցմունքը միայն բավարար է որեւէ վարկած պնդելու համար:

Հարց 10. Այդ օրը վիրավորված Արծրուն Գալստրյանի երկու որդիները անցնում են փետրվարի 5-ի սպանության գործով, գտնվում են տնային կալանքի տակ. իսկ գուցե հանցագործը հետապնդել է Արծրուն Գալստյանի՞ն, կրակել նրա՞ ուղղությամբ, բայց սպանվել են Վալոդյա Գրիգորյանն ու Կարեն Աբրահամյանը, թե՞ հանցանք կատարողի տված ցուցմունքը միայն բավարար է որեւէ վարկած պնդելու համար:

Հարցեր էլի կան:

Հաջորդ 10 հարցերը կհնչեցնենք այս պատասխանները ստանալուց հետո:

Հարգանքներով՝ «Ժողովուրդ» օրաթերթ»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ

Քրեական ոստիկանության՝ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Երեւանի բնակիչ երկու երիտասարդ ձեռք են բերում առանձնապես խոշոր չափերի տարբեր տեսակի թմրամիջոցներ եւ դրանք իրացնում «Տելեգրամ» սոցիալական հարթակի միջոցով:

Տեղեկությունն իրացվեց սեպտեմբերի 25-ին: Ժամը 16:50-ին Երեւանի Արտաշատի խճուղում՝ բենզալցակայանի դիմաց, 23 եւ 29 տարեկան երիտասարդները ձերբակալվեցին եւ վերջինիս վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ տեղափոխվեցին համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին:

Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք ու կնիքվեց:

Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ:

Դատարանի որոշմամբ՝ սեպտեմբերի 27-ին խուզարկություն կատարվեց «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայում: Հայտնաբերվեց ընդհանուր մոտ 150 գրամ մեթամֆետամինի նմանվող զանգվածներով 127 փաթեթ, եւս մեկը՝ մոտ 7 գրամ մարիխուանայի նմանվող զանգվածով: Երկուսն էլ կալանավորվել ու տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ: Նախաքննությունը շարունակվում է:

ԹՄՐԱՆՅՈՒԹ ԻՐԱՑՆՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Սեպտեմբերի 12-ին Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Վանաձորի բնակիչ 32-ամյա տղամարդը, «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայով ընկերոջ հետ գնում է համաքաղաքացու տուն՝ թմրանյութ ձեռք բերելու:

Հետագա միջոցառումների արդյունքում ժամը 10:50-ին քրեական ոստիկանները ձերբակալել ու մեքենայով հանդերձ վարչություն են տեղափոխել ընկերներին:

42-ամյա ուղեւորի խուզարկությամբ հայտնաբերվել են ներարկիչներ, տարբեր գրառումներով ապակե հինգ սրվակ եւ կիսով լցված ներարկիչ, որում, ըստ նրա, մեթադոն է:

Հայտնաբերվածն ու ձերբակալվածները ներկայացվել են Լոռու մարզային քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Պարզվել է նաեւ, որ նույն օրը՝ ժամը 10:30-ին, նախապես պայմանավորվելուց հետո, երկու ընկերները ավտոմեքենայով նախ այցելել են Վանաձորի Նարեկացու փողոցի 33-ամյա մի բնակչի, որը նրանց տվել է յոթ հազար դրամ՝ իրեն մեթադոն բերելու համար, սակայն հանցագործությունն ավարտին չի հասել ոստիկանների միջամտության պատճառով: Հայտնաբերվել ու ձերբակալվել է նաեւ 33-ամյա տղամարդը, որի խուզարկությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգված եւ մոխրացած հետքերով ծխամորճ: 52-ամյա տղամարդը դատարանի որոշմամբ կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 29-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 155 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՄԵՐԳՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԽԱՐԽԱՓՈՒՄ ԷԻՆ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Սեպտեմբերի 26-ին Դիլիջան քաղաքում՝ Էդվարդ Միրզոյանի անվան կոմպոզիտորների ստեղծագործական տան Լյուդվիգ վան Բեթհովենի անվան համերգասրահում, «Հայ ժամանակակից երաժշտության փառատոնի» շրջանակներում համերգ կայացավ:

Երաժշտական այդ փառատոնի ավանդույթը հիմնադրվել է 2014 թվականի աշնանից: Այս տարի այն կայացավ 9-րդ անգամ:

Փառատոնի շրջանակում երկրորդ համերգը կայացավ սեպտեմբերի 28-ին: Լուսավոր տպավորություններով համակված ունկնդիրները համերգից հետո բառացիորեն հայտնվել էին մթության մեջ. խավարում խարխափում էին:

Ո՞վ պետք է լուծի կոմպոզիտորների ստեղծագործական տան շրջակայքի լուսավորության հարցը, Հայաստանի կոմպոզիտորների միությո՞ւնը, թե՞ Դիլիջանի համայնքապետարանը:

Դիլիջան քաղաքի բնակիչները հայտնեցին, որ երեկոյան կայացած համերգների 2 օրն էլ Դիլիջանում անձրեւ էր, մառախուղ, իսկ Բեթհովենի անվան համերգասրահը չէր ջեռուցվում, համերգի ունկնդիրները մրսում էին:

Ո՞Ր ԹՎԱԿԱՆԻՑ Է ՔՊ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Փաշինյանի որոշմամբ 2021 թվականի ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել. «Պարոն Ղալումյան, Դուք ո՞ր թվականի, ո՞ր օրվանից եք անդամակցում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը»:

Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Հարցի վերաբերյալ, ինչպես նախկինում ենք տեղեկացրել Ձեզ, առաջարկում ենք դիմել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը»:

Հավելենք, որ Հայկ Ղալումյանը նախկինում շարքային ՔՊ-ական չէր, այլ ՔՊ կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահը: Սակայն իշխող կուսակցության վարչության նոր կազմի անդամության թեկնածու լինելով՝ քվեարկության ժամանակ կուսակիցների կողմից բավարար քվեներ չստացավ, կուսակցության վարչության անդամ չընտրվեց:

Հայկ Ղալումյանը ՔՊ կուսակցության վերահսկող հանձնաժողովի կազմում ընտրվելու, այն վերստին ղեկավարելու ցանկություն չի հայտնել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«ՄԻԼԻԱՐԴԱՆՈՑ ՎՐԻՊԱԿ»՝ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

Ազգային ժողովի ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրված ՔՊ-ական Հռիփսիմե Հունանյանը, համաձայն 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի, որեւէ անշարժ գույք ձեռք չի բերել: Պատգամավորը 2020 թվականին ձեռք է բերել միայն մեքենա՝ 2008 թվականի արտադրության TOYOTA մակնիշի:

Նրա բանկային ավանդները կազմել են 60 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 186 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները եւս կազմել են 60 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 11 մլն 932 հազար դրամ, որից ԱԺ աշխատակազմից ստացված եկամուտը, որպես աշխատանքի վարձատրություն, կազմել է 8 մլն 339 հազար դրամ:

ՔՊ-ական պատգամավորը ԱԺ-ից ստացել է եւս 3 մլն 592 հազար դրամ՝ դարձյալ որպես աշխատավարձ:

Հունանյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 916 մլն 570 հազար դրամ:

Հետաքրքիրն այն է, թե ինչպես է ստացվում, որ ՔՊ-ականներին նման միլիոնների հասնող վարկեր են տրամադրում, իսկ հասարակ քաղաքացիներին՝ ոչ:

2023 թվականի հայտարարագրի համաձայն՝ պատգամավորի վարկային միջոցները տարեվերջին կազմել են 9 մլն 218 հազար դրամ, իսկ այս գրեթե 1 մլրդ դրամ վարկի ձեռքբերման մասին տարեկան եկամուտների բաժնում ոչինչ չկա:

Հռիփսիմե Հունանյանը 2003 թվականին ավարտել է Երեւանի պետական թիվ 1 հենակետային բժշկական քոլեջի «բուժքույրական գործ» բաժինը:

Ստացվում է, որ նա, չունենալով բարձրագույն կրթություն, դարձել է պատգամավոր, հիմա էլ՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածու է:

2004-2007 թվականներին նա աշխատել է որպես «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի վերակենդանացման բաժանմունքի բուժքույր, 2007-2011 թվականներին՝ հերթափոխի պատասխանատու, 2011-2018 թվականներին՝ վերակենդանացման բաժանմունքի ավագ բուժքույր: 2018-2021 թվականներին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ վերակենդանացման բաժանմունքի ավագ բուժքույր:

2021 թվականի հունիսի 20-ին Հռիփսիմե Հունանյանն ԱԺ պատգամավոր է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով:

ՀԳ. Հոդվածի հրապարակումից 2 ժամ անց «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն զանգահարեցին Ազգային ժողովից եւ փոխանցեցին, որ տեղի է ունեցել պաշտոնական անչի տարեկան հայտարարագրի լրացման վրիպակ, որի արդյունքում 9 մլն 16 հազար դրամ վարկը, դարձել է 916 մլն դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՋԵԿՈՒՅՑ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 60-րդ նստաշրջանի շրջանակներում Ժնեւում ընդունվել է Հայաստանի Հանրապետության Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) 4-րդ շրջանի ազգային զեկույցը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Հայաստանի Համընդհանուր պարբերական դիտարկման 4-րդ շրջանի ազգային զեկույցի ընդունման ընթացքում ՀՀ պատվիրակության ղեկավար, Ժնեւի ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Հասմիկ Տոլմաջյանն իր ելույթում կարեւորել է ՀՊԴ գործիքակազմը եւ դրա շրջանակներում Հայաստանին հասցեագրված հանձնարարականները, որոնք նպատակաուղղված են մարդու իրավունքների համակարգի ամրապնդմանը:

ՀՀ մշտական ներկայացուցիչն ընդգծել է, որ Հայաստանն ընդունել է ՄԱԿ անդամ պետությունների կողմից 2025թ. մայիսի 1-ին՝ ՀՊԴ աշխատանքային խմբի 49-րդ նստաշրջանին կայացած ազգային զեկույցի քննարկման շրջանակներում Հայաստանին հասցեագրված հանձնարարականների գերակշիռ մեծամասնությունը:

Ժնեւի ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցիչն իր ելույթում անդրադարձել է ՀՊԴ հանձնարարականների ու իրականացվող բարեփոխումների համատեքստում Հայաստանի համար առաջնահերթություն ներկայացնող ոլորտներին, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների բնագավառներին:

Հայաստանի ՀՊԴ 4-րդ շրջանի զեկույցի ընդունման ընթացքում ելույթներով հանդես են եկել ՄԱԿ-ի անդամ պետությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ կարեւորելով Հայաստանի շարունակական հանձնառությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը եւ վերահաստատելով իրենց աջակցությունը Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին:

ԱԴՐԲԵՋԱՆՆ ՈՒ ԱՄՆ-Ն ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով բյուրոյի ավագ խորհրդական Ուայթ Թոլքիին եւ Բաքվում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Էմի Քարլոնին:

Կողմերն անդրադարձել են Ադրբեջան-Միացյալ Նահանգներ հարաբերություններին, ռազմավարական գործընկերության հեռանկարին, տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության հարցերի: Քննարկվել է նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման եւ Վաշինգտոնյան համաձայնությունների կյանքի կոչման գործընթացը:

ՄԱԿՐՈՆԸ ՈՂՋՈՒՆԵԼ Է ԹՐԱՄՓԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Ողջունում եմ նախագահ Դոնալդ Թրամփի հանձնառությունը Գազայում պատերազմը դադարեցնելու եւ բոլոր պատանդների ազատ արձակումն ապահովելու հարցում՝ հայտարարել է Ֆրանսիայի նախագահը: Էմանուել Մակրոնը նշել է, որ Իսրայելից ակնկալում է վճռական գործողություններ այդ ուղղությամբ:

«ՀԱՄԱՍ-ն այլ ելք չունի, քան անհապաղ ազատ արձակել բոլոր պատանդներին եւ հետեւել այդ ծրագրին: Այդ տարրերը պետք է ճանապարհ հարթեն բոլոր գործընկերների հետ խոր քննարկման համար՝նպատակ ունենալով տարածաշրջանում կայուն խաղաղություն կառուցել՝ հիմնված «երկու պետության» սկզբունքի վրա, որը Ֆրանսիայի եւ Սաուդյան Արաբիայի նախաձեռնությամբ հավանության է արժանացել ՄԱԿ-ի 142 անդամ պետության հաստատած սկզբունքների վրա»,- նշել է Ֆրանսիայի ղեկավարը:

Նրա խոսքով՝ Փարիզը պատրաստ է իր ներդրումն ունենալ եւ ուշադիր հետեւելու է կողմերից յուրաքանչյուրի պարտավորությունների կատարմանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 24 պատահար, 2 մարդ մահացել է, 32-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ

Օրենքը կլրացվի վտանգավոր թափոնների համար «պոլիգոն», «թափոնների սեփականատեր», «թափոնների կուտակում» հասկացություններով, կամրագրվեն թափոնների արդյունավետ կառավարման սկզբունքները, որոնցից են թափոնների տեսակավորումը, գործածության ստորակարգության կիրառումը, շրջակա միջավայրը թափոններով աղտոտողների պարտականությունները: Այս մասին ասել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արա Մկրտչյանը սեպտեմբերի 30-ի՝ ՀՀ ԱԺ հերթական նիստի ընթացքում:

Առաջին ընթերցմամբ քննարկվել է ««Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

Շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթաց՝թափոնների կառավարման ոլորտում առկա խնդիրների լուծման, թափոնների կառավարման համակարգի կատարելագործման նպատակով:

Օրենսդրական նախաձեռնությամբ կամրագրվեն վտանգավոր թափոնների գործածության, գործունեության լիցենզավորման պահանջները եւ գործընթացի հիմնական կարգավորումները, կհստակեցվեն Կառավարության եւ լիազոր մարմնի իրավասությունները: Առաջարկվող լրացումներով կամրագրվեն ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի ընդունման համար լիազորող նորմեր, կհստակեցվեն վտանգավոր թափոնների անձնագրավորման, հաշվառման, վիճակագրական հաշվետվությունների ներկայացման գործընթացները:

Ելույթներում պատգամավորները խոսել են Նուբարաշենի եւ հանրապետության տարբեր մարզերի աղբանոցների մասին: Շեշտվել է, որ միջպետական ճանապարհների, բնակավայրերի մոտ գտնվող աղբանոցները պետք է փակվեն, քանի որ անտանելի պայմաններ են առաջացել քաղաքացիների համար:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հոկտեմբերի 23 ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով, իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

Մասնակիցների գրանցումը՝Երեւանի ժամանակով սկսած ժամը 14:00-ից: Ժողովի անցկացման սկիզբը՝ ժամը 14:05:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄ

Գ

ԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է «ՖԻՆԹԵՔ ԱՐՄԵՆԻԱ» ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ

«Ամերիաբանկը», որպես հիմնադիր անդամ, միացել է «Ֆինթեք Արմենիա» ասոցիացիային՝ դառնալով վերջինիս միացած առաջին բանկը: Ասոցիացիայի նպատակն է դառնալ ոլորտի առաջատար դերակատար՝ խթանելու ֆինթեք փոխգործակցությունը, նորարարությունն ու փոխակերպումը Հայաստանում եւ Հայաստանից դուրս:

«Ֆինթեք Արմենիա» ասոցիացիայի տեսլականն է տեղական եւ միջազգային գործընկերների միջոցով Երեւանում ստեղծել համապարփակ ֆինթեք հաբ: Ասոցիացիան աշխատում է ֆինանսատեխնոլոգիական ոլորտի ապագան կերտելու ուղղությամբ, որը ներառում է վճարային համակարգերը, կապիտալի շուկաները, արհեստական բանականության կիրառությունը ֆինանսական ծառայություններում, բլոքչեյնը եւ թոքենիզացիան, ապահովագրական եւ բանկային ոլորտների փոխակերպումը՝ տեղական, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում:

Միանալով «Ֆինթեք Արմենիային»՝ «Ամերիաբանկը» վերահաստատում է իր հանձնառությունը՝ աջակցելու ֆինանսատեխնոլոգիական ոլորտի զարգացմանը՝ ստեղծելով դինամիկ հարթակ արագ զարգացող ֆինթեք ոլորտի եւ շարունակաբար փոխակերպվող բանկային համակարգի միջեւ: Բանկի փորձառու ղեկավարությունը ներգրավվելու է «Ֆինթեք Արմենիայի» հիմնական ինստիտուցիոնալ աշխատանքային խմբերում, ինչպիսիք են բանկային փոխակերպումը, ստարտափներն ու վենչուրները, ՀՀ ԿԲ Sandbox-ը եւ Կրթությունը:

ունի ձեւավորել նոր գործընկերություններ, իրագործել համարձակ լուծումներ եւ առաջ մղել մեր առաքելությունը՝ բարելավելու մարդկանց կյանքի որակը:

«Ամերիաբանկը» պարզապես ֆինանսական կառույց չէ, այն ֆինանսատեխնոլոգիական միջավայր է մարդկանց մասին: Մեր պատմությունը նոր մտածելակերպի ձեւավորման, մշակույթի զարգացման եւ արժեքների խթանման մասին է: Մենք երբեք չենք դադարել լինել նորարարությունն ընդունող եւ մարտահրավերները հաղթահարող կազմակերպություն: Այս համագործակցությունը մեր ֆինթեք ճանապարհի տրամաբանական շարունակությունն է, որը նպաստելու է ֆինթեք ոլորտի կայուն աճին՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրից դուրս»:

Արմինե Ղազարյան, Տաղանդների կառավարման եւ ծառայությունների գծով տնօրեն, Տնօրինության անդամ.

«Որպես Հայաստանի տնտեսության հիմնական շարժիչ ուժերից մեկը՝ մենք շարունակաբար փոխակերպում ենք բանկային ոլորտը՝ համադրելով ֆինանսական փորձառությունը, առաջատար տեխնոլոգիաներն ու մարդակենտրոն արժեքները: Մեր համագործակցությունը Ֆինթեք Արմենիայի հետ նպատակ

Սթեֆան Լուկաս, «Ֆինթեք Արմենիայի» հիմնադիր եւ գլխավոր տնօրեն.

««Ամերիաբանկի միացումը» մեր՝ «Ֆինթեք Արմենիա» ասոցիացիայի ընդլայնվող հարթակին շրջադարձային իրադարձություն է ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային բանկային համակարգի ֆինթեք փոխակերպման մասնակիցների համար: «Ամերիաբանկի» էկոհամակարգային լուծումները գերազանցում են դասական բանկային ծառայությունների շրջանակը՝ հանդես գալով որպես հարթակ, որը միավորում է տեխնոլոգիաները, նորարարությունը եւ ներդրումները: Մենք վստահ ենք, որ «Ամերիաբանկն» էական ներդրում կունենա հայկական ֆինթեք շուկայի մասնակիցների գլոբալ ֆինանսական էկոհամակարգում ինտեգրման գործում եւ հակառակը՝ նպաստելով երկկողմանի զարգացմանը»:

«Ամերիաբանկի» մասին

«Ամերիաբանկը» ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

«Ամերիաբանկը», որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ֆինթեք Արմենիայի» մասին

«Ֆինթեք Արմենիան» Կովկասի առաջատար ֆինթեք, ԱԲ եւ բանկային հաբն է, որը գործում է որպես դինամիկ հարթակ՝ համադրելով նորարարությունը եւ առաջ մղելով ֆինանսական տեխնոլոգիաների փոխակերպումը տարածաշրջանում եւ ամբողջ աշխարհում: Անդամակցությունների, գործընկերությունների, հետազոտության եւ զարգացման ուղղությունների, հանձնաժողովների եւ ինստիտուցիոնալ աշխատանքային խմբերի միջոցով «Ֆինթեք Արմենիան» կապում է կորպորացիաներին, կառավարություններին, ՀԿ-ներին, ակադեմիական հաստատություններին եւ ստարտափներին՝ խթանելով ֆինանսական ծառայությունների ոլորտի զարգացումը: Այսպիսով՝ այն նպաստում է ֆինանսական նորարարական տեխնոլոգիաների, ԱԲ գործիքների եւ ֆինթեք լուծումների ներդրմանը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Գ

ԲԱՆԿԸ ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ԴՐԱՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Սույն թվականի սեպտեմբերի 30-ից մինչեւ 2026 թվականի փետրվարի 28-ը ընկած ժամանակահատվածում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն կտեղաբաշխի իր կողմից թողարկված դրամային պարտատոմսերի հերթական տրանշը:

Պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 3,0 մլրդ դրամ, որը ներառում է 300,000 անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 10,000 դրամ անվանական արժեքով:

Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 10.50%, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է կիսամյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի մարման ամսաթիվն է 30.09.2028 թվականը:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում եւ ունենալու են շուկա ստեղծող:

Պարտատոմսերի ծրագրային ազդագրի (գրանցված Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից) եւ թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել բանկի կայքէջից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝ այցելելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք. Երեւան, Ամիրյան 23/1):

Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք՝ դիմելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ:

Հիշեցնենք, որ

- «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակված պարտատոմսերի դիմաց մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը վճարվող արժեկտրոնային եկամուտները ենթակա չեն հարկման:
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

86 86 | aeb.am

«Հայէկոնոմբանկը» վերահսկվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՍ ԿԻՍՈՎ ՉԱՓ ՀԱՅ ԵՄ ԵՎ ԿԻՍՈՎ ՉԱՓ ՖՐԱՆՍԻԱՑԻ». Շ.Ա.

ԱՅՍՕՐ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

Յոթ տարի առաջ՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ին, համայն հայությունը ցնցվեց դաժան բոթից. 94 տարեկանում իր մահկանացուն կնքեց աշխարհահռչակ ֆրանսահայ երգիչ, երգահան, գրող ու հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը (Շահնուր Ազնավուրյան):



Մեծանուն արվեստագետը վախճանվեց Ֆրանսիայի հարավ-արեւելքում՝ Մուրիես քաղաքի իր սիրելի տանը: Դիահերձման արդյունքում պարզվեց, որ մահվան պատճառը թոքերի այտուցն էր:

Հոկտեմբերի 5-ին Փարիզի «Հաշմանդամների տուն» ռազմական համալիրում տեղի ունեցավ Ազնավուրի հիշատակին նվիրված ազգային արարողություն, որին մասնակցեցին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը եւ Հայաստանի բարձրագույն ղեկավարները: Իր խոսքում Մակրոնը շանսոնիեին բնորոշեց որպես «Ֆրանսիայի ամենակարեւոր դեմքերից մեկը»:

Շառլ Ազնավուրը ծնվել է 1924 թվականին Փարիզում՝ հայ գաղթականների ընտանիքում: Նրա ծնողները՝ Միքայելը եւ Քնարը, Հայոց ցեղասպանության տարիներին լքել էին Արեւմտյան Հայաստանը: Նախ ապաստան գտնելով Հունաստանում՝ որտեղ ծնվել էր Ազնավուրի քույրը՝ Աիդան, նրանք հետագայում տեղափոխվեցին Ֆրանսիա: Ի սկզբանե հույս ունեին հասնել Ամերիկա, բայց Փարիզը դարձավ նրանց նոր հայրենիքը:

Ապագա երգահանը մանկուց քայլեց դեպի բեմ. Շառլն ու Աիդան հաճախում էին թատերական դպրոց, մասնակցում ներկայացումների եւ մրցույթների: Շառլը ինը տարեկանում արդեն խաղում էր բեմում, երգում ու պարում, իսկ պարապմունքների գումարը վաստակում թերթ վաճառելով: Նրա բեմական առաջին ելույթը կայացավ 1933 թվականին՝ Theatre du Petit Monde-ում:

Ազնավուրի կարիերայի իրական վերելքը սկսվեց, երբ նա ծանոթացավ երգահան Ռաուլ Բրետոնի եւ նրա կնոջ հետ: Նրանց աջակցությամբ ստեղծվեց «Ազնավուր եւ Ռոշ» դուետը, որը, թեկուզ փոքր քայլերով, սկսեց մուտք գործել ֆրանսիական շոու բիզնես: Այդ շրջանը եղավ նաեւ ճակատագրական. Ազնավուրը հանդիպեց Էդիթ Պիաֆի հետ, գրեց նրա համար երգեր եւ դարձավ նրա մենեջերը: Չնայած քննադատություններին՝ կապված ձայնի կամ արտաքինի հետ, Ազնավուրը կարողացավ հաստատվել որպես ինքնատիպ ու խարիզմատիկ կատարող:

1956-ից նա արդեն հանդես էր գալիս միայնակ կատարումներով՝ միաժամանակ լինելով եւ երգահան եւ արտիստ: 1960-ականների սկզբից նրա երգերը լայն տարածում ստացան, իսկ համերգները Եվրոպայում, Ամերիկայում, Ասիայում եւ հատկապես Նյու Յորքի «Քարնեգի Հոլ»-ում նրան բերեցին համաշխարհային աստղի ճանաչում:

Անձնական կյանքում բախտը եւս ժպտաց Շառլին. 1968-ին նա ամուսնացավ Ուլլա Թորսելի հետ, որի հետ հարաբերությունները, նրա խոսքերով, օգնեցին հեռու մնալ շահագործող միջավայրից եւ պահել սահմանները մասնագիտական ու անձնական կյանքի միջեւ:

«Սերը կրոնի պես է, - ասում էր Ազնավուրը, - հենց գաղափարը, որ այն կա, ինձ օգնում է ապրել: Ես բեմում մարմնավորում եմ հերոսներիս հույզերը, ապրում եմ նրանց կյանքով: Ես չեմ արտահայտում միայն իմ զգացումները. ես դառնում եմ նրանց ձայնը»:

Չնայած գերծանրաբեռնված աշխատանքին ու համերգներին՝ Հայաստանն ու հայությունը մշտապես նրա սրտում էին: «Ես կիսով չափ հայ եմ եւ կիսով չափ ֆրանսիացի», - հաճախ ասում էր նա:

1988-ի Սպիտակի երկրաշարժը դարձավ նրա հասարակական գործունեության շրջադարձային կետը. Ազնավուրը անմիջապես մեկնեց Հայաստան, նախաձեռնեց «Ազնավուրը Հայաստանի համար» հիմնադրամը: Մի քանի ամիս անց համախմբեց ավելի քան 90 արտիստի եւ ստեղծեց «Pour toi Armenie» («Քեզ համար, Հայաստան») երգը, որի ամբողջ հասույթը տրամադրվեց աղետի գոտուն:

Հայաստանը բարձր գնահատեց նրա նվիրումը. 2004-ին նա ստացավ Ազգային հերոսի կոչում, 2008-ին՝ ՀՀ քաղաքացիություն: 2009-ից նշանակվեց Հայաստանի դեսպան Շվեյցարիայում եւ միաժամանակ ՅՈՒՆԵՍԿՕ-ում մշտական ներկայացուցիչ:

Մինչեւ կյանքի վերջ Շառլ Ազնավուրը նա շարունակում էր իր հայանպաստ գործունեությունը: Որդու՝ Նիկոլա Ազնավուրի հետ նա հիմնեց «Ազնավուր» հիմնադրամը, որը մինչ այսօր իրականացնում է կրթական, մշակութային ու սոցիալական ծրագրեր:

2018-ին, երբ արդեն վատառողջ էր, չնայած համերգները չեղարկելու առաջարկներին՝ Ազնավուրը կրկին բեմ դուրս եկավ: Նրա վերջին ելույթները կայացան Ճապոնիայում՝ նույն տարվա սեպտեմբերին:

Շառլ Ազնավուրը կամուրջ էր երկու մշակույթների միջեւ՝ հայկական եւ ֆրանսիական: Նա իր երաժշտական ուղով դարձավ մի ողջ սերնդի հոգեւոր ուղեկից, իսկ իր գործունեությամբ՝ Հայաստանի հավատարիմ բարեկամը:

Այս օրը եւս մեկ առիթ է հիշելու մեծ հային, ոգեշնչվելու նրա բացառիկ նվիրվածությամբ մարդկության հանդեպ եւ վայելելու շքեղ ու սրտահույզ կատարումները:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

«ՏՈՒՆ. ԻՄ ՏԻԵԶԵՐՔ». ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Ռուսական արվեստի թանգարանում «Եվրոպական ժառանգության օրերի» շրջանակում սեպտեմբերի 16-ին բացվել է «Տուն. իմ տիեզերք» խորագրով ցուցահանդեսը:

Ցուցահանդեսը հնարավորություն է տալիս ճամփորդել տարբեր դարաշրջաններում, տեսնել հետաքրքիր քաղաքներ, զգալ Հայաստանի վառ, հյութեղ գույները՝ Ալթայի ցուրտ, խստաշունչ ոգին, Թիֆլիսի տաք արեւը իր նեղ փողոցներով եւ պատշգամբներով, Վիլնոյի սալահատակները, կարմիր հեղափոխությունից ցնցված ռուսական Թուրքեստանի ինքնատիպ, միանգամայն ճանաչելի ճարտարապետությունը:

Ցուցադրության մեջ ներառված կտավներում կան ինչպես առանձին տների, այնպես էլ բնանկարի եւ աշխարհագրական լանդշաֆտի ֆոնին նկարված տների պատկերներ:

Ցուցադրությունն ընդգրկում է հայ եւ ռուս նկարիչների ստեղծագործություններ, որոնց թվում են Մ. Ավետիսյանը, Ե. Թադեւոսյանը, Դ. Նալբանդյանը, Պ. Կուզնեցովը եւ Ա. Դրեւինը: Ներկայացված աշխատանքներից շատերը երկար տարիներ չեն ցուցադրվել եւ պահվել են ֆոնդապահոցում:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ հոկտեմբերի 31-ը:

ՍԵԼԵՆԱ ԳՈՄԵՄ ԱՄՈՒՍՆԱՑԵԼ Է

33-ամյա Սելենա Գոմեսը ամուսնացել է իր սիրելիի՝37-ամյա երաժշտական պրոդյուսեր Բենի Բլանկոյի հետ: Երգչուհին ինքն է հայտարարել հարսանիքի մասին՝ սոցիալական ցանցերում հրապարակելով հարսանեկան արարողությունից լուսանկարներ: Լուսանկարների հեղինակը Պետրա Քոլինզն է:

Լրատվամիջոցների հաղորդագրությունների համաձայն՝ զույգը երդումներ է տվել Սանտա Բարբարայի շքեղ, մեկուսացված Sea Crest Nursery կալվածքում՝ շրջապատված մոտ 170 հյուրերով: Հարսը խորանով քայլել է Ralph Lauren-ի ասեղնագործ ատլասե զգեստով, իսկ Բլանկոն կրել է նույն ապրանքանիշի դասական սեւ սմոքինգ՝թիթեռնիկով:

Հարսանեկան արարողությանը ներկա են եղել նորապսակների բազմաթիվ հայտնի ընկերներ, այդ թվում՝ Թեյլոր Սվիֆթը եւ Սելենա Գոմեսի «Սպանություններ նույն շենքում» ֆիլմի գործընկերներ Մարտին Շորթը եւ Սթիվ Մարտինը: Ներկա են եղել նաեւ Փոլ Ռադը, Էրիկ Անդրեն, Փերիս Հիլթոնը, Էդ Շիրանը եւ այլ հայտնիներ: Սակայն Նիկոլա Պելցը, որի հետ Սելենան անցյալում շատ մտերիմ էր, ակնհայտորեն հյուրերի շարքում չէր:

Ներքին աղբյուրները նախկինում բացահայտել են, որ Պելցը եւ նրա ամուսինը՝ Բրուքլին Բեքհեմը, կորցրել են իրենց շատ ընկերների Նիկոլայի բնավորության պատճառով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՔՎԵԱՐԿԵԼ ՄԵՍՍԻՆ ԵՎ ՌՈՆԱԼԴՈՒՆ

Sports Illustrated-ի տվյալներով՝ «Ինտեր Մայամիի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսին 2025 թվականի Ռայմոն Կոպայի անվան գավաթի (մինչեւ 21 տարեկան լավագույն երիտասարդ խաղացող) քվեարկության ժամանակ ընտրել է «Բարսելոնայի» իսպանացի հարձակվող Լամին Յամալին:

«Ալ-Նասրի» պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն ձեռնպահ է մնացել քվեարկությունից:

Ի տարբերություն «Ոսկե գնդակի», Կոպայի գավաթի հաղթողին ընտրում են ոչ թե լրագրողները, այլ «Ոսկե գնդակի» նախկին դափնեկիրները: Այս տարի քվեարկությանը մասնակցել է 27 ֆուտբոլիստ:

Քվեարկողների ճնշող մեծամասնությունը, այդ թվում՝ Մեսսին, Մոդրիչը, Զիդանը, Բենզեման եւ Կական, «Բարսելոնայի» խաղացողին դրել են առաջին տեղում:

ՊՍԺ-ի ֆրանսիացի կիսապաշտպան Դեսիրե Դուեին Յամալի փոխարեն ընտրել են միայն Ռոբերտո Բաջոն, Ռուդ Գուլիտը եւ Պավել Նեդվեդը:

ԱՐՈՆՅԱՆԸ ՈՉ–ՈՔԻՈՎ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

Լեւոն Արոնյանը ոչ-ոքի արդյունքով է ավարտել Բրազիլիայում ընթացող «Grand chess tour»-ի առաջին պարտիան: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Grand Chess tour»-ի եզրափակիչ մրցաշարի առաջին տուրում Լեւոն Արոնյանը մրցեց ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Ֆաբիանո Կարուանայի հետ: Արոնյանը խաղում էր սեւ խաղաքարերով: Պարտիայի 37-րդ քայլին գրոսմայստերները համաձայնեցին կիսել միավորը:

«Grand chess tour»-ի եզրափակիչ մրցաշարն անցկացվում է Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում: Ընդհանուր մրցանակային ֆոնդը գերազանցում է 1 միլիոն դոլարը:

ՄԿՐՏՉՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵՑ «ՕՍԻԵԿ»–Ի ԽԱՂԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի պաշտպան Ստյոպա Մկրտչյանը ամբողջական հանդիպում անցկացրեց «Օսիեկ»-ի կազմում:

Խորվաթիայի ֆուտբոլի առաջնության 8-րդ տուրում «Օսիեկ»-ը արտագնա խաղում մրցեց «Գորիցա»-ի հետ եւ առավելության հասավ նվազագույն հաշվով:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի պաշտպան Ստյոպա Մկրտչյանը «Օսիեկ»-ի մեկնարկային կազմում էր եւ մասնակցեց ամբողջ խաղին:

Այս հաղթանակից հետո «Օսիեկ»-ը մրցաշարային աղյուսակում 7-րդն է: Ստյոպա Մկրտչյանը նոր-նոր է վերականգնվում ստացած վնասվածքից:

● *Հոկտեմբերի 3-ին՝20:00-ին, Նորարար փորձառական արվեստի կենտրոնում տեղի կունենա «Զապել Եսայան. փրփուր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ դեպի ԵԱՏՄ եւ այլ երկրներ բուսական ծագման մթերքի արտահանման համար:

Հարություն Կիրակոսյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանվող բուսական ծագման մթերքը պետք է լինի փաթեթավորման նյութի՝ արկղերի մեջ, յուրաքանչյուրի վրա հստակ մակնշմամբ, որը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունը՝

- ծագման երկիրը, ապրանքի անվանումը,; արտադրողի անվանումը եւ հասցեն, արտահանողի անվանումը եւ հասցեն, ստացողի անվանումը եւ հասցեն, պահման ժամկետը, ջերմաստիճանը:

Արտահանվող խմբաքանակը պետք է զերծ լինի ցանկացած տեսակի կարանտին վնասակար օրգանիզմներից:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտահանվող թարմ պտուղ-բանջարեղենի խմբաքանակի մաքսային ձեւակերպումների համար անհրաժեշտ է ունենալ հետեւյալ փաստաթղթերը՝

1. արտահանման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր: Արտահանման հաշիվ-ապրանքագրում նշվում են ապրանքն արտահանողի եւ ստացողի անվանումները, հասցեները, ՀՎՀՀ-ն, ապրանքի նկարագիրը, քանակը, քաշը, արժեքը,
2. տրանսպորտային փաստաթղթերը - CMR,
3. ապրանքների ձեռքբերման փաստաթուղթ, բացակայության դեպքում՝ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքը,
4. ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրվող անվտանգության կամ ֆիտոսանիտարական հավաստագիր, որը խմբաքանակի վերը նշված փաթեթավորման եւ մակնշման պահանջների ապահովման եւ կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ լինելու դեպքում տրամադրվում է արագացված ընթացակարգով՝ 20 րոպեում,
5. ապրանք ստացող կողմը պարտադիր պետք է լինի ԵԱՏՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ համաձայն ԵԱՏՄ անդամ ներմուծող երկրի կողմից ներկայացված պահանջի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այլ երկրներ արտահանելիս ներմուծող երկրի պահանջի դեպքում անհրաժեշտ է ունենալ նաեւ արտադրանքի ծագման երկրի հավաստագիր, որը տրամադրվում է ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի կողմից առանց փորձաքննության, դիմումի ստացման օրվանից հետո՝ 1-օրյա ժամկետում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե երբ է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը:

Կարինե Առաքելյան
(59 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Առաքելյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամ ճանաչված անձը կրկին բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

Անձի կամ նրա ներկայացուցչի դիմումով վերափորձաքննությունն իրականացվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման, իսկ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում՝ նաեւ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք՝ փաստացի բնակության վայրից: Օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այս դեպքը կատարվել է Վանաձորում: Կատուն փորձել է կիսաբաց լուսամուտից փախչել եւ այսպես մնացել է փեղկերի արանքում:

Վանաձորցի երիտասարդը փրկել է կատվին՝ մեծ փայտով ներս հրելով նրան դեպի տուն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 7 +14 + 19
Կոտայքի լեռներ	+ 3 + 7 +13 + 17
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 12 +19 + 23
Գեղարքունիք	+ 2 + 7 +13 + 16
Լոռի	+ 3 + 8 +16 + 19
Տավուշ	+10 + 13 +18 + 23
Արագածոտնի լեռներ	+ 2 + 6 +12 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 12 +18 + 23

Արարատ	+10 + 14 +22 + 24
Արմավիր	+ 8 + 12 +21 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 7 +13 + 18
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 +21 + 24
Սյունիքի հովիտներ	+ 9 + 14 +19 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 10 +16 + 19
ԼՂՀ	+ 9 + 12 +17 + 19
Երեւան	+14 + 17 +19 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*